ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ 2865–ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2010 թ. հոկտեմբերի 7–9-ին «Վասպուրական» հայրենակցական միությունը և ՀՀ - Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը, մասնակցությամբ Պատմության և Արևելագիտության ինստիտուտների, կազմակերպեցին Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:

Գիտաժողովը նվիրված էր ոչ միայն Հայոց առաջին մայրաքաղաքի, այլ նաև ողջ Վասպուրական աշխարհի պատմամշակութային ժառանգությանը, հնագիտությանը, ազգագրությանը, բանագիտությանը, գրականությանը, արվեստին ու ճարտարապետությանը: Այն անց էր կացվում «Էրեբունի–Երևան-2792» տոնակատարության շրջանակներում:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ մի շարք ինստիտուտների՝ հնագիտության և ազգագրության, պատմության, արևելագիտության, գրականության, լեզվի, նաև Մատենադարանի, Երևանի պետական, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական և Երևանի ճարտարապետության ու շինարարության համալսարանների, Հայաստանի պատմության թանգարանի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի շուրջ քառասուն գիտաշխատողներ: Բանախոսների թվում էին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտությունների ինը դոկտորներ, շուրջ քսան գիտությունների թեկնածուներ, նաև հետազոտողներ ԱՄՆ-ից, Իրանից, Ֆրանսիայից:

Գիտաժողովի հանդիսավոր բացումը կայացավ «Մոսկվայի տան» ընդարձակ դահլիճում: Ողջույնի խոսքով ներկաներին դիմեցին «Վասպուրական» միության վարչության նախագահ Գագիկ Բաղդասարյանը, *ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն* Պավել Ավետիսյանը, *Գիտությունների ազգային ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի անունից՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն* Աշոտ Մելքոնյանը*: Վերջինս, մասնավորապես, շեշտեց. «Տարիներ առաջ, երբ պատմաբանները գրում էին Արևմտյան Հայաստանի և բռնազավթած հայրենիքի մասին, նրանց թվում էր, թե այդ թեման միայն իրենց և գրողների մի մասի սեփականությունն է: Բարեբախտաբար, անկախություն ձեռք բերելուց հետո մեր պատմությունը դարձավ ամբողջ ժողովրդի սեփականությունը, և շատ խորհրդանշական է, որ այս գիտաժողովը կազմակերպվում է գիտնականների և «Վասպուրական» հայրենակցականի համատեղ ջանքերով: Դա նշանակում է, որ գիտությունը և հասարակությունը քով քովի անում են նույն բանը, միտված են նույն նպատակին, և կարծես թե մեզանում համահայկական իմաստով ձևավորվում է գաղափարախոսություն»:*

Առաջին օրվա զեկուցումները վերաբերում էին Վան-Վասպուրականի հնագույն շրջանից մինչև միջնադար ընկած ժամանակահատվածի պատմամշակութային ու քաղաքական ժառանգությանը: Լսվեցին հաղորդումներ, որոնցում Վասպուրական աշխարհը դիտարկվում էր Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթիդարյան մշակութային զարգացումների համակարգում (Արսեն Բոբոխյան*), քննարկվում էին Տուշպա քաղաքին ու բիայնական (ուրարտական) պետության կազմավորման որոշ հարցեր (*Երվանդ Գրեկյան*), ի մի բերվեցին ու հանգամանորեն քննվեցին Վան-Տուշպա մայրաքաղաքի առաջին հիշատակությունները (*Տորք Դալալյան*), ճշտվեցին Սարգոն արքայի 714 թ. արշավանքի երթուղու մի քանի մանրամասներ (*Բաբկեն Հարությունյան*), խոսվեց Դրմերդից գտնված նորահայտ սեպագիր արձանագրության մասին (*Աշոտ Փիլիպոսյան*), մեծ քանակությամբ պատկերների ցուցադրմամբ ներկայացվեցին ուրարտական սեպագիր արձանագրություններով ժայռափոր դռները (*Միքայել Բադալյան*), մեկ վահանի վրայի զինատեսակների քննությամբ ցույց տրվեցին դրանց զուգահեռները Ուրարտուի կիրառական արվեստում (*Արտավազդ Զաքյան*): Կարևոր հարցադրումներով անդրադարձ եղավ Վանի թագավորության մշակույթի ուսումնասիրության հիմնախնդիրներին (*Հայկ Ավետիսյան*), հանգամանորեն խոսվեց հետուրարտական դարաշրջանի Վանի մասին (*Հայկ Հակոբյան*), Վանից հայտնաբերված մի կնիքի վրայի պատկերի քննությամբ անդրադարձ եղավ մշակութային մի ամբողջ շերտի (*Արմինե Գաբրիելյան*), փորձ արվեց վերանայել Վասպուրականի «Աշխարհացոյց»-ով վկայված սահմանների խնդիրը (*Ալեքսան Հակոբյան*), Վասպուրականի արքա Գագիկ Ա-ի օրոք տեղ գտած առևտրական ու տնտեսական վերելքի արդյունքի համատեքստում դիտարկվեց թագավորական ու գաղափարախոսական բանավեճի նոր էտապը (*Պիտեր Քաուի*), հանգամանորեն խոսվեց Վասպուրականի գրչության կենտրոնների մասին (*Արփենիկ Ղազարոսյան*): Նիստերին հաջորդող ասուլիսների, ապա և քննարկումների ժամանակ անդրադարձ եղավ Վանի թագավորության մշակութային ժառանգության գնահատմանը (մասնավորապես, առնչությանը նախորդող ու հաջորդող դարաշրջանների մշակույթներին), աքեմենյան 13-րդ և 18-րդ սատրապությունների, «Աշխարհացոյց»-ում արտացոլված սահմանների մեկնաբանումներին, այլ հարցերի:*

*Գիտությունների ազգային ակադեմիայի կլոր դահլիճում ընթացող գիտաժողովի երկրորդ օրվա ընթացքում հնչեցին ելույթներ, որոնք առավելապես լուսաբանում էին XIX դարի երկրորդ կեսի XX դարասկզբի իրադարձությունները: Բավականին հանգամանալի, հարուստ պատկերներով ներկայացվեց Վան քաղաքի պատմաճարտարապետական ժառանգությունը (*Դավիթ Քերթմենջյան*), բնութագրական գծերով խոսվեց Վանի XIX դարի երկրորդ կեսի հոգևոր-մշակութային-հասարակական գործիչների մասին (*Էմմա Կոստանդյան*), որպես հայկական ազգային անդրանիկ կուսակցություն դիտարկվեցին Վանի արմենականները (*Արմեն Կարապետյան*), ճշտվեց Վանի վիլայեթի հայ բնակչության թվաքանակը և տեսակարար կշիռը Առաջին աշխարհամարտի նախօրյակին (*Գեղամ Բադալյան*), անդրադարձ եղավ XIX դարավերջին ու Առաջին աշխարհամարտի տարիներին Բաքվում ապաստանած Վան-Վասպուրականից գաղթած հայերին*

*(*Գևորգ Ստեփանյան*): Մի շարք զեկուցումներ նվիրված էին Վանի հերոսական ինքնապաշտպանությանը (*Սուրեն Սարգսյան*) ու դրան հաջորդող իրադարձություններին, մասնավորապես տարածաշրջանի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթին ու դրա հետևանքներին արևմտահայության ճակատագրում (*Ավետիս Հարությունյան*), Վան-Վասպուրականի վերաշինությանը 1915 թ. աշնանն ու 1916 թ. (*Ռուբեն Սահակյան*): Գրականագետներ* Սուսաննա Հովհաննիսյանն *ու* Անուշավան Զաքարյանն *անդրադարձան համապատասխանաբար Հովհաննես Թումանյանի ու Սերգեյ Գորոդեցկու կյանքում ու ստեղծագործության մեջ Վան քաղաքի թեմայի գրված տեղին, գրողների՝ Վան կատարած այցելության ազդեցություններին: Ի մի բերվեցին նաև Աղթամարին առնչվող ժողովրդական ավանդություններն ու կղզու անվան ստուգաբանությունները (*Վարդան Դևրիկյան*): Հարցուպատասխանի ու քննարկումների ժամանակ ընդարձակ անդրադարձ եղավ, մասնավորապես, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական բանակի կովկասյան ռազմաճակատում գործողությունների բնույթին, դրա գնահատականներին:*

*Գիտաժողովի երրորդ օրն ընթանում էր Հայոց վերջին մայրաքաղաքի՝ Երևանի պատմության թանգարանի դահլիճում, այդ կերպ խորհրդանշորեն կապելով Հայոց առաջին ու վերջին մայրաքաղաքները: Այդօրվա զեկուցումները առավելապես վերաբերում էին տարածաշրջանի բնակչության ազգագրությանն և բանահյուսությանը: Ներկաները հետաքրքրությամբ ունկնդրեցին Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր աշխարհագրական (ենթաէթնիկական) խմբերի միջև առկա գենետիկական փոխառնչություններին վերաբերող ելույթը (*Լևոն Եպիսկոպոսյան *և գործընկերներ), ինչպես նաև Վասպուրականում ու Տարոնում Աստղիկ դիցուհու պաշտամունքի դրսևորումներին նվիրված անդրադարձը (*Լիլիթ Սիմոնյան*), Վասպուրականի զարդահամալիրի (*Սվետլանա Պողոսյան*) ու մանկական եզակի մի ապարանջանի (*Աստղիկ Իսրայելյան*) հանգամանալի ներկայացումը: Վանի դպրոցի ասեղնագործ ժանյակներին նվիրված զեկուցումով հանդես եկավ* Սոֆյա Գալֆայանը, *Վասպուրականի ասեղնագործության առանձնահատկություններին անդրադարձավ* Կարինե Բազեյանը*: Հայագետ* Մոհամմադ Մալեք-Մոհամմադիի *զեկուցման մեջ քննվեցին Վան-Վասպուրականից հայտնի «Շահնամե»-ի հայկական բանահյուսական տարբերակները, Վանի բարբառի բառարանագիրների գործունեությունը դիտարկեց* Հայկանուշ Մեսրոպյանը*: Վերջին նիստում լսվեցին զեկուցումներ, որոնք վերաբերում էին վանեցիների պատմական հիշողության գրառման ու հրատարակման պատմությանը (*Վերժինե Սվազլյան*), Վան-Վասպուրականի ժողովրդական հեքիաթների ընդհանուր բնութագրմանը (*Թամար Հայրապետյան*), Վասպուրականի հեքիաթներում առկա կայուն բանաձևերին (*Էսթեր Խեմչյան*), Վանի երևելի գերդաստանների պատմության դրվագներին (*Ալբերտ Միքայելյան*), անեկդոտ-զվարճապատումներում վանեցիների թեմային (*Արմեն Սարգսյան*):*

Գիտաժողովի ավարտին «Վասպուրական» միության նախագահ Գ. Բաղդասարյանը համոզմունք հայտնեց, որ միությունը 2011 թ. սեպտեմբերին Վան-Վասպուրականին նվիրված միջազգային գիտաժողով կկազմակերպի Վան քաղաքում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ